ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՄ ՔԱՅԼԸ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՏԻԿԻՆ Լ. ՊԻՊՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Պիպոյան.

Ի պատասխան Ձեր 30.11.2018թ. 01/20 գրության՝ տեղեկացվում է.

Այգեձորի փողոցի հ.41/1 հասցեում առանձնատան կառուցման համար առկա է Երևանի քաղաքապետարանի հետ 19.01.2018թ. համաձայնեցված հ.01/18-05/1-Կ-20-19 նախագիծը (որն անցել է համապատասխան փորձաքննություն և «Էքսպերտ մեկ» ՍՊԸ-ի կողմից 25.12.2017թ. տրվել է փորձագիտական դրական եզրակացություն) ու կառուցապատող Վահե Փափազյանին 19.01.2018թ. տրված հ.01/18-Կ-20-27 շինարարության թույլտվությունը: Կառուցապատողի կողմից նախագծային պահանջներից դուրս նշված հասցեում իրականացվել է մոտ 20.0 քմ մակերեսով քարե պարսպի կառուցման շինարարական աշխատանքներ, որի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության կողմից 11.12.2018թ. կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ հ.028824 արձանագրությունը (կցվում է) և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 256-րդ հոդվածի պահանջների շրջանակում ուղարկվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժին՝ հիշյալ վարչական գործը քննելու համար:

Ինչ վերաբերում է շինարարության արդյունքում պատճառված վնասներին, տեղեկացվում է, որ կառուցապատողը նախքան շինարարություն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ, իսկ հարևանների միջև առաջացած վեճերը լուծվում են միմյանց հետ փոխհամաձայնությամբ կամ դատական կարգով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ